

Փ Ո Ւ Ն Ջ

Օ Ր Ա Գ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հատր 10 փարայ է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիտ պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ փարի դրանը կից Նոր Գրատունը :

Կ. ՎՈԼԻՍ. — ԳՈՆՍՈՒԻՏԷ

23 հոկտ. շաբաթ	երեկոյ	22	էր.
	գոցուեցաւ	47	4
27 հոկ. երկու . առաւօտ	բացուեցաւ	46	36
	ժամը չորսին	46	37

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Կարինէն ամեն . Ս. Պատրիարք Չօր կողմանէ գրուած նամակ մը հաւասարութ օրը Պատրիարքարան, որով կճանուցանէ ամսոյս 16ին յիշեալ քաղաքէն դէպ ի Տրապիզոն ճամբայ ելած ըլլալը : Նորին բարձր սրբազնութիւնը այս գրոյն մէջ կնշանակէ թէ կեդրոնական սնտուկին վիճակը, անտեսութիւնը և միանգամայն իւր պարզապիտութիւնը չեն ներքեր որ զինքը ընդունելու համար մեծածախ հանդէսներ ըլլան :

Այս անակնկալ գրութեան վրայ, շաբաթ օրը Պատրիարքարանէն հեռագիր քաջուեցաւ Տրապիզոնի թաղական խորհրդոյն, որպէս զի Նորին սրբազնութիւնը ճամբայ չենէ մինչև որ կայսերական կառավարութեան

կողմանէ յատկացեալ շոգենաւն հսն հասնի :

Հրաւիրակները այսօր փաղը մայրաքաղաքէս կուզեորին դէպ ի Տրապիզոն : Ասոնցմէ Մելքոն Էֆէնտի Պատկերհանեան հիւանդ պառկած է :

— Ուրախութեամբ կլսեմք թէ, վարժապետեան գեր. Ներսէս եպիսկոպոսի անձնական առողջութեան վիճակն աղէկի դարձած է վերջին օրերս : Անցեալ շաբթու սկսեր է իջնել Շահնազար—Նուպար վարժարանը և խնամարկել :

Նորին սրբազնութիւնը իւսկիւտար պիտի դայ, քանի մ'օր նախկին Տեղապահ Արիստակէս ազգանէր սրբազանի իւր հոգևոր ծնողին հիւր ըլլալու և օգտախոխելու համար : Արիստակէս սրբազանը յատկապէս անտութեան դացած և հրաւիրած է զինքը :

— Պէտք ունեցողին համար կժանուցանեմք թէ Գաւաչու Բակալիններ գիւղի ազգայնոց կողմանէ Պատրիարքարան տրուած հանրագրոյն մեր ձեռքն անցած օրինակին աակի թուականը « սեպտեմբեր 28 է » . ուստի Սրբառատ լրագիրն այս մասին մեղա-

դրելի չէ, քանի որ յիշեալ հանրա-
գրոյն օրինակը մեր լրագրէն առնե-
լով հրատարակած է :

Կնկաւեմք որ վերջին օրերս Պատ-
րիարքարանը փոյթ կտանի լրագրաց
գրուածոց ոմանց վրայ պաշտօնական
ծանօթութիւններ հրատարակելու : Երա-
նի թէ այսպէս շարունակէր, որովհե-
տեւ կրնայ օգտակար ըլլալ հասարա-
կութեան . բայց աղէկ կըլլայ եթէ
պաշտօնական գրուածոց արժան ե-
ղած լեզուն գործածելու համար ու-
շագրութիւն ընէ և աւելորդ ու ծանր
բառեր չգործածուին :

Բերայի նարեկեան վարժարա-
նի վրայ տեղեկագրութիւն մը տե-
սանք այս օրերս, զոր հրատարակել
տուած է մեծ . Պ. Միքայել Գաղմա-
ճեան, իւր տեսչութեան միջոցին ար-
դիւնքը երևան հանելու նպատակաւ
ընդդէմ ոմանց՝ որոնք անբարեկարգ
ազարդիւն ու խանգարեալ միճակի
մէջ կցուցնեն եղեր զայն :

Գարսցական այս հրատարակեալ
տեղեկագիրը՝ զոր բաւական ուշա-
գրութեամբ աչքէ անցուցինք, պար-
տաւոր կընէ զվեղ՝ շնորհակալութիւն
յայտնելու մեծ . Գաղմաճեանի, որ
իւր տեսչութեան ատենը վարժարանը
արդիւնաւոր ընելու համար աշխա-
տութիւն և ամեն կարելի միջոց չէ
խնայեր :

« Հօկա . 10 թուականով Ս. Երու-
նազեմէն հաւատարիմ աղբիւրէ դըր-
ուած տեղեկութեան մը նայելով, Ս.
Յակոբայ աւագ լուսարարապետ կա-
րապետ եպիսկոպոսը Եսայի Ս. Պատ-

րիարքին դէմ անխլայել խօսքեր ար-
տասանած ըլլալով, Ս. Պատրիարքը
կատիպուի ընդհանուր ժողով գլու-
մարել :

Ընդհանուր ժողովը կը վճռէ ու
կատարողի որ լուսարարապետ եպիս-
կոպոսը յանցաւոր է, ուստի ժողովը
Ս. Պատրիարքի հետ մէկտեղ անմի-
ջապէս եկեղեցի կիշնեն, լուսարարա-
պետին ձեռքէն դանձատան բանա-
լիները առնելով զայն պաշտօնէ կը
ձգեն ու գանձատունը կը կնքեն :

Բայց Պատրիարքի և լուսարարա-
պետի մէջ տեղը դեռ մրցումը շարու-
նակելու վրայ ըլլալով, կարապետ ե-
պիսկոպոս ինքզինքը ազատելէ զատ
Պատրիարքի դէմ յաղթանակ իսկ տա-
նելու կը ճգնի եղեր, միաբանից մէջ
կողմնակիցներ որսալով » : Սրբա-
ւոր

Արարտայ ՉՅրորդ թուոյն մէջ
հետեւեալ հանելուկները կկարդամք :
Ս.

Շնորհակալ ենք Խորէն եպիսկոպոսէն,
որ Գաղղիոյ կայսրուհւոյն եթէ Հայ Պատ-
րիարքը չկրցաւ ներկայանալ, գոնէ Հայ
եպիսկոպոս մը ներկայանալով և Պատ-
րիարքին չի կրնալ ներկայանալուն պատ-
ճառը ծանուցանելով Նորին վեհափառու-
թեան, ազգին ճառալուծիւն մը ըրաւ :

Շնորհակալ չենք Խորէն եպիսկոպո-
սէն, զի անոր Գաղղիոյ կայսրուհւոյն ներ-
կայանալը լոկ անձնական էր, և ատոր
մէջ Ս. Պատրիարքին ընաւ ծանուցութիւն մը չենք
տեսներ :

Ս. Պատրիարքին կողմէն Գաղղիոյ կայսրուհւոյն
ներկայացում մը ընել պարտաւորութիւն է
ազգին և այդ ներկայացումը չըլլալուն

համար խառն ժողովը պակասութեան եւ
անցանքի մէջ գտնուած է, եւ ո՛ր կողմ
գաւառայու ըլլանք խառն ժողովոյ այս պա-
կասութիւնը կամ յանցանքը անարդարա-
նալի է :

Օրաֆէր

Ազգին կողմէն Աւստրիոյ կայսերներ-
կայացում մը չըլլալուն համար խառն ժո-
ղովին բնաւ արհամարհանք մը ընելու Ի-
րաւունք չունինք . քանի որ հիւրը հիւ-
րանկալող տանտէրը զմեզ հերկայացնէր ,
մենք ելլալ ինքնին ներկայանալնիս մեզի
անկրթութիւն կրնար համարուիլ :

Օրաֆէր

Օրագիրը իւր շարաթ աւուր թը-
ուովը կ՛ծանուցանէ թէ ո՛վ որ առաջին
հանելուկին երկրորդ պարբերութիւ-
նը պարունակող Օրագրի թերթեր
դտնէ ու իրեն բերէ, մէկ մէկ օսման
եան ոսկի պիտի վճարէ :

Արարտայ խմբագրութիւնը բա-
ւական սակի պիտի ստանայ . . . :

ԻՍՈՒՆ ԼՈՒԻՆԻ

Գուրիէ տ՛Օրիան լրագրին նա-
յելով, Բ. Գրնէն վերջին անգամ Ե-
դիպատս զրկուած հրամանագրոյն պա-
տասխանը անցեալ չորեքշաբթի օրը
եկած ըլլալու է :

Յոյս կոյ թէ, այս պատասխա-
նը գոհացուցիչ ըլլալով, մօտերս հա-
մաճայնութիւնը պիտի վերահաստատաի
Բ. Գրան և յիշեալ իշխանութեան մէջ :

— Ինչպէս ծանուցած էինք շա-
բաթ օրը, երէկ մայրաքաղաքս հա-
սաւ Ֆիլէմէնկի գահաժառանգ իշ-
խանը, և Կէօքսույի կայսերական
քեօշիք ընդունուեցաւ, թնդանօթ-
ներով պիտուուելով : Իշխանը նախ
օգոտտ . Սուլթանին աւսութեան գը-

նայ, և յետոյ՝ Նորին կայսերական
վեհափառութիւնը փոխադարձ այ-
ցելութեամբ պատուեց զանի :

Այս իշխանին անունը Կիյոմ Յը-
րէտէրիք Հենրի է : 49 տարեկան է .
լճակիցն հեան է և իրենց նստած շո-
գենաւէն զատ երկու շոգենաւներ ալ
հետերնին կգտնուին :

— Աւստրիոյ կայսրը 2300 ֆրանդ
ընծայեր է մայրաքաղաքիս աւստրիա-
կան հիւանդանոցին :

— Զվիցերիի հասարակապետու-
թեան կողմանէ Սուէիշի ջրանցքին
բացման հանգիսին ներկայ գտնուե-
լու զրկուած անձինքն պատիւ ունե-
ցեր են անցեալ չորեքշաբթի օրը օ-
գոտտ . Սուլթանին ալ ներկայանալու :

— Տրամայի վիճակին մէջ այս տա-
րի ծխախոտի բերքը առատ է եղեր :

— Ղալաթիա մտնիֆաթուրաճի մը
40000 լիրա բացով սնանկացեր է :

— Շարաթ առաւօտ մայրաքաղա-
քս հասնող գաղղիական շոգենաւը
լուր բերած է թէ անցեալ հիդշաբթի
Աւստրիոյ կայսրը Բիրէ համեւուն պէս
Գէորդ թագաւորէն ընդունուեր է, որ
Աթէնքէն յատկապէս հոն իջած է ե-
ղեր : Մէկտեղ Աթէնք գացեր են :
Կայսրը հետեւեալ օրը տեսնելու ար-
ժանի տեղերը աչքէ անցունելէն յետոյ,
Իրիկուան գէմ ճամբայ ելեր է :

— Կլեմէք թէ մայրաքաղաքիս ա-
ւրստրիական և ռուսական դեսպան-
ներն ալ այս շաբթու Եգիպտոս պիտի
ուղևորին, Սուէիշի ջրանցքին բացման
հանգիսին ներկայ գտնուելու հա-
մար :

Փարիզի մէջ օգերը բաւական
ցրտացեր են և ձիւն եկեր է : Տուն-

րուն ու զրօսարաններուն սօսյաները վառուեր են : Փայտին դրեթէ մէկ քէն մինչև 70 զուրուշ բարձրացեր է :

Յուրտերը Նաբոլէոն կայսեր աղէկ չգալով, հիւանդութիւնը կըօրացունեն բայց նա կառավարական գործով կըբազի եղեր :

— Հելլենական կառավարութիւնը, առաջիկայ 1870ին, ընդ ամենը 13865 հոգի ցամաքային զօրք պիտի ունենայ, 733ը՝ գլխաւոր, և 2476ը՝ երկրորդական կարգի հրամանատարներ ըլլալով : Իսկ ծովային զօրաց թիւը 1371 է, որոնց 171ը՝ գլխաւոր, 229ը՝ երկրորդական հրամանատարներ են եղեր :

— Իտալիոյ թագաւորը այս օրերս քիչ մը անձնական տկարութիւն ունի եղեր :

— Անգղիոյ հանդուցեալ գլխաւոր պաշտօնեայ լորտ Տէրպի կտակ ըրած է եղեր, որ մարմինը թաղուած ատենը իւր ընտանիքէն զատ մարդ չըլտնուի քովը :

— Փարիզի մէկ քանի արհեստաւորաց սպասաւորները և ուրիշ գործաւորք գործելէ դադրեր են, պահանջելով որ կիւրակէ օրերը հանգիստ ընեն և օրուան 24 ժամուն միայն 12 ժամերուն մէջ աշխատին : Այս դէպքը շատ արհեստաւորաց վիասակար եղեր է, և պիտի պարտաւորին եղեր իրենց վաճառատունները գոցել, եթէ ուրիշ գործաւորներ կամ սպասաւոր չգանեն : Շատերը փարիզի շրջակաները դրեր, և ոմանք՝ իդական սեւեւ գործաւորներ գանելու ելեր են : Գործաւորաց այս շարժումը ուրիշ տե-

ղեր ալ ազդեցութիւն ընելով, մէկ քանի արհեստաւորաց աշխերաներ ալ միացեր են և միւլենոյն պահանջմունքը կրնեն եղեր :

Պօլիս Մագա Եօդուշու Զիւմպլուլի խանին տակը Պ. Գալաֆեանի խոնութը կժախուին, Պէր Սէֆէլ Զէֆէ ախուն հետաքրքրական պատմութիւն մը՝ ի գին 10 զուրուշ, և առաջիկայ 1870 տարւոյն Գալաֆեան ի գին 2 զուրուշ :

Փունըք ձեռքէ ծախուելէ զատ, կգանուի նաև՝ Սագա Եօդուշու Գալաֆեանն ու Արևելեան և Մահմուտ ֓աշա իզմիրլեան գրավաճառաց խոնութները և Գաշըգ ճի խանի քովի գըրատունը :

Պօլիս Գալաֆեան գրատունը Յական զուրուշի կժախուի տեարակ մը որ կսովրեցունէ կերակուրներ եփելու և խմորեղէններ շինելու եղանակը :

Էջնօփ կամ Յէննի Խարէ անունով նոր հրատարակութիւն մը 8 ական զուրուշի կժախուի Պօլիս Զագմագ ճըլար Եօդուշու Գալաֆեան գրատունը :

Պօլսոյ շքադաքապետութեան ժողովին անգամ մեծ Մէհմէա Միահաթէֆէնաին գաղղիարէնէ տաճկերէնի թարգմանած է այս կարևոր ու պիտանի հեղինակութիւնը :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԲԻՐԲՅՅԵԱՆ